«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը**

Դասիարակ՝ Գրիգորյան Ռուզաննա Թումանի

Մանկապարտեզ՝ Գյումրու <<Փարոս>> «ՀՈԱԿ»

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1.1. ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ……4

2.2. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ……5

2. 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……7

2.4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական գործունեությունը պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ բարելավում: Հատկապես մեծ տեղ պետք է հատկացնել դաստիարակության և ուսուցման ժամանակակից տեսություններում արծարծվող այն հարցերին, որոնք վերաբերվում են հատկապես դաստիարակության և ուսուցման արդյունավետ պայմանների ապահովմանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ուսումնադաստիրարակչական աշխատանքների իրականացման գործընթացներում անհատական և տարբերակված մոտեցումներին, սաների տարիքային և անհատական զարգացման առանձնահատկություններին:

Վաղ մանկությունը աճի և զարգացման առանցքային փուլ է, քանի որ այդ շրջանի փորձառությունները կարող են ազդել անհատի կյանքի ողջ ընթացքի վրա: Բոլոր երեխաների համար վաղ մանկությունը հնարավորության մի կարևոր պատուհան է ՝ պատրաստվելու եւ մասնկացելու ցկյանս ուսումնառությանը, միևնույն ժամանակ կանխարգելելով զարգացման հնարավոր հապաղումներն ու հաշմանդամությունը:

Այս ամենի համատեքստում դժվար չէ գիտակցելը, որ մանկավարժական աշխատողի մասնագիտական շարունակական զարգացումը, նոր կարողությունների ձևավորումն ուղղակի անհրաժեշտություն է, ժամանակի բնական պահանջ:

Այս աշխատանքի նպատակն է՝

- ներկայացնել մանկավարժական աշխատողի գիտելիքների համալրման և հմտությունների շարունակական զարգացման ընթացակարգն ու անհրաժեշտությունը,
- ներկայացնել ժամանակակից կրթական պահանջներն ու ձևավորված համակարգի առանձնահատկությունները:

1. 1. ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Արդի հասարակության սոցիալ-տնտեսական, հոգևոր և նյութական ոլորտների արմատական փոփոխությունների, հիմնականում հասարակության զարգացման նորարարական փուլին անցնելու համատեքստում բարձրագույն դպրոցի մարտահրավերներից մեկը դառնում է աճող սերնդին ապագա մասնագիտական գործունեությանը նախապատրաստումը և մասնագիտական դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու հմտությունների ձևավորումը: Այդ հիմնախնդրի լուծումը սովորողների կրթության որակական նոր մակարդակ է պահանջում, մասնավորապես մանկավարժական կրթության համակարգի կատարելագործում, կրթության համակարգի գիտամեթոդական ապահովում: Հետարդյունաբերական ժամանակաշրջանում կարևոր է դառնում մարդու սոցիալական և ստեղծագործական կարողունակությունների (կոմպետենցիաների) մասսայականության պահանջարկը: Կրթական ոլորտը, արձագանքելով նոր ժամանակների մարտահրավերներին, կարիք ունի նոր մարդու, որն ունակ է ինքնուրույն գործել, սեփական դիրքորոշում, ստեղծագործական մտածողություն, ինքնիրացման ունակություններ դրսևորել: Ժամանակակից կրթական համակարգն իր առջև ծառացած խնդիրների լուծման համար պետք է իր բնույթով նորարարական դառնա: Նորարարական համակարգն իր կոչմանը համապատասխան պետք է ապահովի որոշակի գործառույթներ.

- մանկավարժական համակարգում փոփոխությունների հրատապ կարիքների (հիմնախնդիրների) բացահայտում,
- նորարարական գործունեության համակարգի նախագծում,
- նորամուծությունների գործնական իրականացում: Զարգացման միտումների նկատմամբ ընկալունակությունը կրթական հաստատության այն առանձնահատկությունն է, որը ցույց է տալիս կրթական գործունեության օբյեկտիվ հնարավորությունները բացահայտելու և դրանք համարժեք գնահատելու նրա կարողությունը (В.С. Лазарев, 2013 с. 4):

2.2. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունները նոր պահանջներ են ներկայացնում մանկավարժական կադրերի պատրաստմանը, ինչպես նաև մանկավարժական աշխատողի մասնագիտական գործունեության կազմակերպմանը: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը (ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ պետական ծրագիր): Նոր կրթական հարացույցի համապատասխան փոփոխվում են մանկավարժական աշխատողների դերը, գործառույթները, ինչի արդյունքում ընդլայնվում են նաև նրա մասնագիտական գործունեության ոլորտները: Մանկավարժական բուհը, ինչպես նաև վերապատրաստող կազմակերպությունները, պետք է կարողանան պատրաստել այս նոր պահանջներին համապատասխան, աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ, ինչն էլ պայմանավորված է կրթական ծրագրերի բովանդակությամբ, դրանց իրագործման պայմաններով, նյութատեխնիկական բազայով, դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակով: Կրթության ոլորտի բարեփոխումները Հայաստանում սկսվել են անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Անցած տարիների ընթացքում իրականացված բարեփոխումների արդյունքում լուծվել են կրթական համակարգում առկա բազմաթիվ խնդիրներ, նախադրյալներ են ստեղծվել հետագա զարգացման համար: Այդուհանդերձ, ինչպես նշվում է կրթության զարգացման պետական ծրագրում, կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, մյուս կողմից՝ զարգացմանը զուգընթաց առաջ են եկել նաև նոր մարտահրավերներ: Թեև բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ,

սակայն հասարակական գիտակցության և պետական քաղաքականության գերակայությունների շարքում նախադպրոցական կրթությունը շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևորագույն գործոն:

2. 3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտության մասնակիցները տարբեր ՀՈԱԿ-ների մանկավարժական աշխատողներ են, ովքեր ունեն տարբեր աշխատանքային գործունեություն և ստաժ՝ 2-30 տարվա: Սկզբում իրականացվեց դիտարկում և առանձին զրույցներ տարվեց մասնակիցների հետ, իրենց մասնագիտական կարողությունների, ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների, աշխատանքային դժվարությունների հետ կապված: Գրեթե բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ նախադպրոցական կրթությունը անհատի կյանքում ամենակարևոր և որոշիչ օղակներից է և այստեղ ճիշտ և համակարգված աշխատանքը հետագայում տալիս է իր դրական արդյունքը: Նրանք կարևորեցին մանկավարժական աշխատողի դերը, որպես այդ դինամիկ գործընթացի գլխավոր «խաղացող». մանկավարժական աշխատողի գիտելիքից և հմտություններից է կախված չափորոշչային նվազագույն պահանջների ապահովումը՝ անկախ ուսումնական հաստատության տարբեր կարիքների հագեցվածության՝ չնայած հագեցվածությունն ու հարմարությունները միշտ որոշիչ են:

Կազմակերպվեց ֆոկուս խմբային քննարկում՝ արդյո՞ք ԲՈՒՀ-ի տված գիտելիքներն ու մի քանի տարվա ընթացքում ձեռք բերված հմտությունները բավական չեն ակտիվ աշխատանքային գործունեություն ծավալելու, արդյունավետ աշխատանք կատարելու, ստեղծագործելու և ՀՀ կառավարության նախադպրոցական կրթության պարբերաբար թարմացվող պահանջներից հետ չմնալու համար, թեմայով: Քննարկման ժամանակ մասնակիցները եկան որոշակի համոզման ու ամբողջացրին իրենց թեմատիկ քննարկումը հետևալ կետերի տեսքով՝

- մանկավարժական աշխատողը պարտավոր է իրականացնել ուսումնադաստիրակաչկան աշխատանքները համաձայն նախապես մշակված պլանի, որը բխում է յուրաքանչյուր սանի շահերից,
- կիրառել առավել արդյունավետ տեխնոլոգիաներ, որը պահովում է տարբերակված ուսումնադաստիարակչական աշխատանքներ,

- համագործակցել իրենց և մյուս հաստատություններում աշխատող աշխատակիցների հետ՝ օրինակելի փորձի փոխանակման և խորհրդակցելու նպատակով։
- տրամադրել հետադարձ կապ ծնողներին, ապահովել բարեկիրթ մթնոլորտ նրանց հետ շփվելու, շարունակաբար համագործակցելու համար։
- վարել թղթապանակ, համակարգել, մեկնաբանել, ներկայացնել կատարված աշխատանքներն ու հետևողականություն ցուցաբերել աշխատանքների պատշաճ կատարմանը։

Բոլորով փաստեցին, որ այս ամենը իրագործելու համար մանկավարժական աշխատողը պետք է շարունակաբար ինքնակրթությամբ զբաղվի, զարգացնի իր հմտությունները, անցնի տարբեր վերապատրաստումներ և բարեխիղճ մոտեցում ցուցաբերի իր բոլոր պարտականություններին, քանի որ գործ ունի դեռևս չձևավորված անհատների հետ և յուրաքանչյուր վրիպումը կարող է անցանկալի հետևանքների բերել։

2. 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները իրոք բխում են ժամանակի կրթական պահանջներից և պարտադիր վերապատրաստման գործընթացը որպես շարունակական կրթության ապահովման անբաժանելի մաս կոչված է նպաստելու ներկա կրթական բարեփոխումների իրականացմանը և կրթության որակի բարձրացմանը:

«Պատմության ընթացքում դեռ երբեք այսքան կարևոր չի եղել ներդրումներ անել կրթության ոլորտում, որը բազմակողմանի զարգացած և բազմազան հասարակության ստեղծման, հետազոտությունների, ստեղծագործականության և նորարարությունների զարգացման գլխավոր ռեսուրսն է»: (Всемирная конференция по высшему образованию – 2009. Итоговое коммюнике)

21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերաիմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
3. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
4. Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
5. Նոր չափորոշչով մանկապարտեզում երեխաները կսովորեն մեդիագրագիտություն, կծանոթանան օրենքի գաղափարին. Նախագիծ, https://www.armtimes.com/hy/article/208780
6. ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին, https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/9368835223ec84664689175ec655a9e8.pdf, ընդ. 13.05.2021